600.0547.26.12.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2012 թվականի №547Ա
քաղ. Երևան

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի ը) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2013-2015 թվականների ներդրումային ծրագրին՝ 33 980,7 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան--կայանի վերակառուցում և ընդլայնում. 2013-2015 թվականների ընթացքում՝ 12 651,8 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 426,3 մլն դրամ (հավելված №1),
   2) գազափոխադրման համակարգի վերակառուցում. 2013-2015 թվականների ընթացքում՝ 9 799,3 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 1 423,2 մլն դրամ (հավելված №2),
   3) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2013-2015 թվականների ընթացքում՝ 1 255,4 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 395,4 մլն դրամ (հավելված №3),
   4) նոր բաժանորդների միացում. 2013-2015 թվականների ընթացքում՝ 716,0 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 315,0 մլն դրամ (հավելված №4),

5) գազաբաշխման համակարգի վերակառուցում. 2013-2015 թվականների ընթացքում՝ 5 279,3 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 1 795,9 մլն դրամ (հավելված №5),

6) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2013-2015 թվականների ընթացքում՝ 4 278,8 մլն դրամ, որից 2013 թվականին՝ 2 427,4 մլն դրամ (հավելված №6):

2. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2013 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2014-2016 թվականների ներդրումային ծրագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովի.

1) 2011 թվականի դեկտեմբերի 21-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2012-2014 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №595Ա որոշումը,

2) 2012 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի №595Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №430Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
26 դեկտեմբերի 2012թ.
ժամը 16[00]